

ձայնէ, սելենին վրայ կը ներդրծէ այն. պիսի փոփոխական սաստկութեամբ որ հեռախօսից թրթռացողթիթեղն շարժումն կը ստանան և ձայնը յառաջ կը բերեն:

Արդ մինչև ցայժմ լուսախօսը մեծ գործածութեան մէջ չմտաւ, սակայն կատարելազործութիւնն և գործածութիւնն պիտի չյամենան դալու, թէ պէտ և զհեռախօս գործին մերժելու շափ չէ:

Արդարէ ՚ի հեռաստանէ կարենալ խօսիլն առանց հաղորդչաց՝ գեղեցիկ և հարկաւոր բան է, բայց լցուն կը խաֆանի և կրխոտորի յամենայն փոքր արգելաց, մինչեւ թելերը ամենայն տեղ կը փոփոխին և ըստ հարկին տեղափոխութեանց կը հնազանդին: Բայց սակայն առիթք չեն պակասիր, յորում լուսախօսը պիտի կարենայ միշտ ստոյգ ծառայութիւններ մատուցանել:

Բացայս է որ նա միջոց կ'ըլլայ որ կ իցէ անձանց խօսակցութեան, առանց հեռաղբական թելերու: Պիտի կարենան խօսիլ առնէ ՚ի տուն, ՚ի գործատունէ՝ իւր բաժանմանց սրահները, զանգակատունէ՝ ուրիշ մը, և այլն: Գա, տերազմի ժամանակ նշան տալու լոյս կը գործածէին, արդ ընդհակառակն ուղղակի կրնայ խօսուիլ և հասկըցուիլ: Շոգենաւգ ՚ի ծովու, կրնան թողուլ իրենց նշանները և խօսիլ: Նշանաբարձ հեռազերները ՚ի հեռաստանէ անց նող նաւերուն բերանով յանձնարարութիւններ զրկեն պիտի:

Ուրեմն զործածութիւնն ըստ ժամանակին պիտի ըլլան: առ այժմ՝ ի բաց թողովզ զապագայն, դոհ ըլլանք ճաննալով զիւտ մը, որ իրաւամբ կը բնայ կոչուիլ այժմեան բնարանութեան եղականներէն մին:

Նոր գրիչ Մագ-քիննոն. — Զկայ մէկն որ շարունակաբար սովորական գրիչ մը գործածէ, և կամ քիչ մ'երկար ժամանակ բանեցընէ, և պողպատի և սագի փետրէ շնուած գրչէն աւելի դիւրազործածերի գործւոյ մը պիտոյքը զղգայ: Պէտք է ամեն վայրկեան թաթախել գրին թանաքի մէջ, շարժումն՝ որ ժամանակ կը կորսընցընէ և կը յօգնեցընէ միանգամայն: միշտ ըզթուղթը արատաւորելու վտանգ կայ: և հազիւ թէ սկի գրիչն աղէկ գրել, ահա թանաքը կը պակասի: Ահաւասիկ ծանր առարկութիւնք որ եղան այն վայրկենէն, երբ սկսաւ գրիչ և թանաք ՚ի գործ ածուիլ, և որք չեն կրնար առարկուիլ փոքրիկ գործւոյս զոր կ'ուզնքն նկարագրել:

Իր ձեն ընդհանրապէս կապարէ գրչի կը նմանի: Բունելիքն խողովակ մ'է լի սովորական գրելու կամ ընդ-

օրինակական թանաքով: Ծայրն որ գրելու կը ծառայէ, բոլորաձեւ է և կ'աւարտի վայելուշ ձեռվ ոսկեզօծ խողովակիկով մը, ծայրը իռհտով, և վայը լուն հայելուց պէս: Խոհսի խողովակին ծայրը բացուած անձուկ ճեղքուածէ մը, թանաքն կը վազէ ամենաթեթև ճնշմամբ թղթին վրայ, և գործւոյն շէնքն այնպէս ՚որ այս վազելը անմիջապէս կը գադարի երբոր ձեռաց ճնշումն կը վերանայ:

Մէկն եթէ այս գրիչս ունենայ, կրնայ գրել եօթանասունէն մինչեւ ութսուն երես թղթոյ առանց ընդհաստման: Արատաւորութիւնքն անկարելի են, և երբ գործին չի բանիր, պնդապէս կը գոցուի, այնպէս որ թանաքն ոչ կրնայ խտանալ և ոչ ցամաքիլ: Կարևոր է աղէկ թանաք գործածել: Խողովակն դիւրաւ կը լեցուի փոքրիկ սարուածով մը զոր ամեն գրիչ ունի իւր հետն: